



Այսուհետ Դուք կարող եք Easy pay վճարային տերմինալների միջոցով 24/7 ռեժիմով իրականացնել.

Խնայողական, ընթացիկ հաշիվների համալրումներ
Քարտային հաշիվների համալրումներ
Վարկի մարում.

Այժի Բանկն իր հաճախորդներին առաջարկում է բանկային և քարտային հաշիվների համալրման, ինչպես նաև վարկերի մարման հարմարավետ և ժամանակակից եղանակ նաև Easy pay վճարային տերմինալների միջոցով:

Այսուհետ Դուք կարող եք Easy pay վճարային տերմինալների միջոցով կատարել Ձեր բանկային և քարտային հաշիվների համալրումները, վարկերի մարումները՝ առանց Բանկ այցելելու՝ ժամանակի իրական ռեժիմում: Ծառայությունը հասանելի է շուրջօրյա Easy pay ընկերության 300ից ավելի տերմինալների միջոցով՝ տեղակայված ինչպես Երևանում, այնպես էլ 33 մարզերում:

Easy pay տերմինալներով կատարված հաշիվների համալրումները Բանկում հասանելի կդառնան/փաստացի կիրականացվեն ժամանակի իրական ռեժիմում՝

- երկուշաբթիից-ուրբաթ՝ 09:00-17:45
- շաբաթ օրը՝ 10:00-14:00-ն,
- մնացած օրերին և ժամերին՝ հաջորդ բանկային օրը՝ 09:00-ին:

Արտարժույթով հաշիվների համալրման դեպքում տերմինալ մուտքագրված 33 դրամով գումարը կփոխարկվի բանկային/քարտային հաշվին վերջինիս հաշվեգրման (քաղվածքում արտացոլման) պահին Բանկում անկանխիկ գործարքների համար գործող փոխարժեքով:

Պայմաններ և սակագներ	
Բանկային/քարտային հաշվի համալրման, վարկի մարման նվազագույն գումար ¹	1.000 ՀՀ դրամ
Բանկային/քարտային հաշվի համալրման, վարկի մարման առավելագույն գումար ²	100.000 ՀՀ դրամ
Յուրաքանչյուր գործարքի դիմաց գանձվող միջևորդավճար	300 ՀՀ դրամ
<p>¹ Եթե վճարման գումարը համալրման նվազագույն գումարից փոքր է, ապա վերջինիս ավտոմատ կուղղվի հաճախորդի բջջային հեռախոսահամարի հաշվեկշռի համալրմանը:</p> <p>² Հաճախորդը կարող է իրականացնել 1-ից ավել գործարքներ:</p>	